ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 10.10.2017թ. N 117/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.10.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Երեղյանը, Գ.Օսիպյանը, Վ.Սարդարյանը, Դ.Հարությունյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1. «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն (ք.Երևան, Մանանդյան 25շ. բն.6)
2. Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն (ք.Երևան, Արշակունյաց-5)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ի և Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

1. «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:
2. Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն մասնակցի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը՝ ըստ չափորոշիչների համակարգ է ներբեռնվել մեկ ֆայլով և հրավերով նախատեսված փաստաթղթերի միայն առաջին էջերն է հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ		Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ		Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		Անուշ Պետրոսյան Ա/Ձ	''Բևեռային ուղի'' ՍՊԸ	Անուշ Պետրոսյան Ա/Ձ	«Բևեռային ուղի» ՍՊԸ	
1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	3950000	3333250	3950000	3999900	**4000000**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում արձանագրեց, որ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը՝ ըստ չափորոշիչների համակարգ է ներբեռնվել մեկ ֆայլով և հրավերով նախատեսված փաստաթղթերի միայն առաջին էջերն է հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հաշվի առնելով, վերոգրյալը և այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը չի կարողանում որոշում կայացնել Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի բավարարման կամ մերժման հարցում, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը ժամանակավորապես կասեցնել և գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար պարզաբանման նպատակով գրությամբ/կցվում է/ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը վերսկսել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պատասխան գրությունը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Գ.Երեղյան

Գ.Օսիպյան

Վ.Սարդարյան

Դ.Հարությունյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան